ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ՖՐԱՆՍԵՐԵՆ

ՀԵՂԻՆԱԿ Արփինե Զեյնալյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Զագիկավանի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ Լ. Օհանյան, մ.գ.թ., դոցենտ

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ……3
2. Հետազատական համատեքստ ……5
3. Գործնական համատեքստ ……8
4. Հետազոտական ընթացք ……...11
5. Տվյալների մշակում և վերլուծություն ……...13
6. Եզրակացություն ……..…15
7. Օգտագործված գրականության ցանկ……..…16
8. Հավելվածներ……17-20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում գիտության առաջընթացը պահանջում է գիտելիքներով, հմտություններով և կարողություններով զինված քաղաքացի, իսկ դպրոցն այն հիմնական օղակն է, որտեղ ձևավորվում է այդ քաղաքացին: Ժամանակակից դպրոցներում աշակերտներն ունեն զարգացման և պատրաստվածության տարբեր մակարդակ: Նրանք ուսումնական գործընթացում ցուցաբերում են գիտելիքների յուրացման տարբեր աստիճաններ և առաջ են շարժվում զարգացման տարբեր տեմպերով: Որպես կանոն, այս դեպքում ուսուցիչը հիմնականում ուսուցումն իրականացնում է հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտների վրա: Այս հանգամանքը արհեստականորեն կանգնեցնում է ուժեղ կարողություններ ունեցող աշակերտների զարգացումը: Նրանք կորցնում են ուսման նկատմամբ հետաքրքրությունը, իսկ թույլ կարողություններ ունեցող աշակերտները դատապարտված են մյուսներից հետ մնալու կարգավիճակին:

Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ միջին կարողությունների տեր աշակերտները նույնպես միմյանցից տարբերվում են իրենց խնդիրներով, դժվարություններով, աշխարհայացքով: Նույն դասարանում սովորում են տարբեր զարգացման մակարդակներով, կոնկրետ առարկայի նկատմամբ տարբեր հակումներով և մտավոր կարողություններով աշակերտներ: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ խնդիր է առաջանում տարբեր կարողություններ ունեցող սովորողների համար գտնել ուսումնառության կազմակերպման առավել արդյունավետ ուղիներ: Այս խնդրի լուծման համար ուսուցիչն իր գործունեության ողջ ընթացքում գտնվում է շարունակական պրպտումների մեջ, թե ինչպե՞ս կարելի է դասն ավելի հետաքրքիր դարձնել, ինչպե՞ս կարելի է պահպանել սովորողների կայուն հետաքրքրությունը ուսման նկատմամբ և ինչպե՞ս ապահովել դասարանի բոլոր սովորողների առաջադիմության աճը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում սովորողների ուսումնառության կազմակերպման գործընթացում ուսումնասիրել նրանց անհատական առանձնահատկությունները, ապահովել պայմաններ նրանց ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար՝ յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերելով տարբերակված անհատական մոտեցում, ինչը **փաստում է հետազոտության արդիականությունը**: Անհրաժեշտ է յուրաքանչյուր

աշակերտին հնարավորություն տալ ծրագրային նյութը յուրացնել իր կարողությունների սահմաններում, որպեսզի ուսուցումը հարմարեցվի սովորողի զարգացման տեմպերին: Կարևոր է, որ ուսուցիչն իր ձեռքի տակ ունենա ամենատարբեր, բազմաբնույթ, բազմաշերտ առաջադրանքներ, որոնք կօգնեն նրան իրականացնել տարբերակված ուսուցում: Դասաժամերի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցման ակտիվ ձևերի կիրառումով: Դրանք օգնում են սովորողներին համագործակցել խմբի անդամների հետ, ստեղծում են խմբի համար բարենպաստ միջավայր և փոխադարձ վստահություն են առաջացնում սովորողների միջև : Տարբերակված ուսուցումը ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են :

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել տարբերակված ուսուցման արդյունավետությունը ֆրանսերենի դասավանդման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումնասիրել տարբերակված ուսուցման բովանդակությունը, ռազմավարությունները և սկզբունքները,
- ցույց տալ տարբերակված ուսուցման գործնական կիրառության ձևերը տարրական դպրոցում ֆրանսերենի դասաժամերին,
- բացահայտել տարբերակված ուսուցման արդյունավետությունը տարրական դպրոցում ֆրանսերենի դասավանդման գործընթացում:

Հետազոտության մեջ կիրառվել են երկրորդային տվյալների վերլուծության, դեպքերի ուսումնասիրության (Case Study), անկետավորման, համեմատության, տվյալների վերլուծության և մշակման մեթոդները:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ/ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Տարբերակված ուսուցումը ուսուցչի կողմից միևնույն բովանդակությունը մատուցելիս տարբեր ռազմավարությունների և բազմաստիճան առաջադրանքների կիրառումն է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սանի կարողությունների մակարդակը:
Ըստ Բոլտյանսկու. <<Տարբերակված ուսուցումը, դա.
-ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է , որի ընթացքում ուսուցիչը աշխատում է ուսումնական պրոցեսի հետ կախված որևէ գործառույթով կազմավորված խմբերի հետ
-դիսակտիկ համակարգի ընդհանուր մաս է, որը ապահովում է սովորողների տարբեր խմբերի հետ ուսումնական գործընթացը>> [12]:
Ուսուցման մեջ տարբերակված մոտեցումը տարբեր տիպի դպրոցների, դասարանների, խմբերի համար ուսուցման բազմապիսի պայմանների ստեղծումն է հաշվի առնելով անհատական առանձնահատկությունները:
Մերօրյա դպրոցում խնդիր է մոտիվացիայի պակասը, և տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս բարձրացնել սովորողների մոտիվացիան՝ նրանց համար ստեղծելով ինտելեկտուալ զարգացման հնարավորություն: Քանի որ տարբերակված ուսուցումը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր սովորողի սովորել իր ունակություններին համապատասխան, տալիս է գործողությունների ընտրության որոշակի ինքնուրույնություն, ինչն էլ կարող է ստիպել սովորողին հետաքրքրվել մատուցվող նյութով: Չկան բացարձակ անկարող սովորողներ, պարզապես անհրաժեշտ է բացահայտել նրանց ուժեղ կողմերը և նրանց ուսուցումը կազմակերպել՝ հիմնվելով ուժեղ կողմերի վրա:
Տարբերակված ուսուցման նպատակը ոչ միայն թույլ կարողություններ ունեցող սովորողների կրթական կարիքների ապահովումն է, այլ նաև միջին ընդունակությունների և հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող և բարձր առաջադիմություն ցուցաբերող սովորողների համար հնարավորությունների ստեղծումն է: Հայտնի է, որ դասարանները կազմավորվում են ըստ սովորողների տարիքի,սեռի, բայց նրանց միատարիք լինելը չի ենթադրում զարգացման և պատրաստակամության միևնույն աստիճան:Հաճախ ուսուցիչը ուսումնական գործունեության ընթացքում՝ դասի ժամանակ դժվարանում է որևէ առաջընթաց գրանցել, քանի որ սովորողների միջև առկա են մեծ տարբերություններ, որոնք էլ պայմանավորված են մի շարք հանգամանքներով:Նախ սովորողներն ունենում են տարբեր նախնական գիտելիքներ տվյալ առարկայից, տարբեր կարողություններ, արժեքային համակարգ, բառապաշար, ինչպես նաև՝ ընկալման, ուշադրության կենտրոնացման, լեզվամտածողության, հիշողության տարբերություններ: Պակաս կարևոր

տարբերություն չէ նաև, թե ինչ ընտանիքից է սովորողը, սոցիալ-հուզական ինչ պայմաններում է ապրում:

Լիզ Բիլզը և Վալ Բրուկսը բնորոշում են այն տարբերությունները, որոնք կարող են ազդել աշակերտների ուսումնառությանն ուղղված պլանավորման վրա [2, էջ 40].

- կրթական տարբերություններ
- հոգեբանական տարբերություններ
- ուսումնառության ոճի տարբերություններ
- սոցիալական, մշակութային և գենդերային տարբերություններ

Լիզ Բիլզը և Վալ Բրուկսը «Տարբերակման կիրառումն ուսումնառության խթանման համար» հոդվածում գրում են. «Այն, որ աշակերտները տարբեր են և ունեն տարբեր կարիքներ համընդհանուր ճշմարտություն է: Ըստ ակադեմիական առաջադիմության ավանդական դարձած տարբերակմանը զուգահեռ տարածում է գտնում նաև այն տեսակետը, որ աշակերտները ունեն ուսումնառության ոճի տրամաբանական տարբերություններ, և հոգալով նման տարբերությունների մասին՝աշակերտներին օգնում ենք իրացնելու իրենց ներուժը: Տարբերակման միջոցով են ուսուցիչները և դպրոցները հնարավորություն տալիս յուրաքանչյուր աշակերտին իրացնել իր ամբողջ ներուժը: Այն ենթադրում է, որ ուսուցիչները պատկերացնում են անհատների ուսումնառության ոճի նախապատվությունները, նրանց կարիքներն ու դժվարությունները. բացահայտվում են ուսումնառության այն խոչընդոտները, որոնց բախվում են որոշ երեխաներ, և միջոցներ են ձեռնարկվում դրանք վերացնելու կամ գոնե նվազեցնելու ուղղությամբ: Հմուտ տարբերակումը բխում է ուսումնառության կատարելագործման համար անհրաժեշտ գործողությունների հավաստի հայտորոշումից, այդ պատճառով տարբերակումը և գնահատումը դիտարկվում են որպես փոխկապակցված զուգադիր երևույթներ: Գնահատումը օգնում է ուսուցչին հասկանալու, թե ուսումնառության որ կետում է գտնվում աշակերտը տվյալ պահին և որոշելու հետագա քայլերը. ինչպիսի փորձառությունը, օժանդակությունը կամ մարտահրավերը կօգնեն նրանց առաջընթաց գրանցել: Գնահատումից ստացած տեղեկատվությունը գործողությունների հիմք է հանդիսանում, այդ իսկ պատճառով տարբերակումը և գնահատումը խիստ փոխկապակցված գործընթացներ են: Տարբերակումը ռազմավարությունների համակարգ է, որի նպատակն է համոզվել, որ յուրաքանչյուր աշակերտ դասից հեռանում է ուսումնառության մեջ մի քայլ առաջ կատարած. գիտի ավելին, ավելի խորն է ընկալում, վստահաբար կիրառում է հմտությունները և ուզում է սովորել ավելին» [2, էջ 63]:

Տարբերակված ուսուցում իրականացնելիս ուսուցչի խնդիրն է ուսումնասիրել սովորողների անհատական առանձնահատկությունները, նրանց մեջ սովորելու նկատմամբ

հետաքրքրություն և գիտելիքների բացերը լրացնելու ցանկություն առաջացնելը:Ցանկալի արդյունքի հասնելու համար կարևոր է նշել սովորողների անգամ ամենափոքր հաջողություններն ու ձեռքբերումները, բացատրել նրանց հետ մնալու պատճառները և միասին գտնել դժվարությունները հաղթահարելու ուղիներ:Միայն իր առաջընթացը, նույնիսկ աննշան հաջողությունը զգալը կմղի սովորողին ավելի լավ աշխատելու: Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը: Ուսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր, բարոյական, հուզական և ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռում լիովին բացահայտել սովորողի մտավոր կարողությունները, հոգեբանական առանձնահատկությունները: Այս ուսումնական գործընթացում ուսուցչի խնդիրն է ոչ թե սովորողին հարմարեցնել ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութը հասանելի ու մատչելի դարձնել յուրաքանչյուր սովորողի համար:Այս մոտեցումը հնարավորություն կտա դասին բոլոր սովորողների ակտիվ մասնակցության, յուրաքանչյուրը կունենա իր անելիքը, իրեն տրված դժվարությունը կլինի հաղթահարելի: Իրենց ընդունակություններին, կարողություններին ու հմտություններին համապատասխան հանձնարարությունների, իրենց համար հաղթահարելի բարդության և ծավալի առաջադրանքների կատարումը կբարձրացնի սովորողների ինքնագնահատականը, ուսման հանդեպ հետաքրքրությունն ու խանդավառությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Տարբերակված ուսուցման հաջողությունը կախված է գործընթացի ճիշտ կազմակերպումից:Դասարաններում ընդգրկված են տարբեր կարողություններով օժտված երեխաներ, ուստի տարբերակված ուսուցում կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տարբեր են սովորողների՝

- սովորելու ոճը
- մղումը
- վերաբերմունքը
- հետաքրքրությունները
- ուղեղի կիսագնդերի դոմինանտությունը
- սեռը

Տարբերակված ուսուցման եղանակները կախված են առարկայի բովանդակությունից, առարկայի ծրագրային, չափորոշչային պահանջներից, սովորողների անհատական կարիքներից: Պետք է հաշվի առնել նաև սովորողների ինֆորմացիսայի ընկալման տիպերը՝

- վիզուալ (տեսողական)
- աուդիալ (լսողական)
- կինեսթետիկ (շարժողական)

Ուսումնական նույն նյութը անհրաժեշտ է վիզուալ առանձնահատկություններ ունեցողին տրամադրել նյութը բացատրող տեսադասերի ձևով,լուսանկարների, գծապատկերների միջոցով: Աուդիալին՝ աուդիոդասագրքերի, ավելին, կարող են ինֆորմացիան հեշտությամբ մտապահել, երբ այն տրամադրվում է մեղեդու, բանաստեղծության կամ երգի տեսքով: Կինեստետիկին՝ առցանց ինտերակտիվ հանձնարարության [11]:

Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը:Այն հնարավորություն է տալիս ամբողջովին հարմարեցնել բովանդակությունը, մեթոդները և սովորողի ուսումնական գործունեության տեմպը, հետևել չիմացությունից իմացության անցմանը, ուսումնական գործունեության մեջ ժամանակին կատարել անհրաժեշտ ուղղում: Տարբերակումը կարելի է դիտարկել դասի բովանդակության, գործընթացների և արդյունքների համատեքստում: Տարբերակման ամենատարածված ռազմավարություններն են.

- տարբերակում ըստ առաջադրանքի
- տարբերակում ըստ ռեսուրսի

- տարբերակում ըստ ժամանակի
- տարբերակում ըստ օժանդակության
- տարբերակում ըստ արդյունքի

Տարբերակումը որպես դասապլանավորման մաս, ներառում է դասարանում անհատների և խմբերի որոշակի կարիքները հոգալու համար ուսուցիչների կողմից ձեռնարկած մանրակրկիտ քայլեր: Հետևաբար, դասապլանավորման փուլում միշտ պետք է հաշվի առնել անհատականացված կրթական ծրագրեր ունեցող աշակերտների պահանջները [8]:

Ուսումնական քարտերով առաջադրանքների կիրառումը ևս համարվում է տարբերակված ուսուցման ձև: Ուսուցման գործընթացում վերջիններիս օգտագործումը աշակերտների մոտիվացիան բարձրացնող և արդյունավետ ուսումնական միջոց են: Դրանց կիրառությունը հնարավորություն է ընձեռում էլ ավելի արդյունավետ ընդգրկելու սովորողներին ուսումնական ակտիվության մեջ՝ առաջադրելով նրանցից յուրաքանչյուրի կարողություններին համապատասխան աշխատանք:

Ուսուցման գործընթացում ուսումնական քարտերի առաջադրանքները հնարավոր է վերաբերեն ցանկացած ուսումնական հարցի: Կարևոր է, որ քարտերում տեղ գտած հանձնարարությունները համապատասխանեն տվյալ դասարանի մակարդակին, ուսումնական նպատակին և ակտիվությանը; Ուսումնական քարտերը պետք է կազմել պարզ: Դրանցում տեղ գտած առաջադրանքի պահանջը պետք է հասկանալի լինի աշակերտի համար: Քարտերի տեսքն ու կառուցվածքը ևս պետք է գրավիչ լինեն՝ աշակերտներին ոգևորեն դեպի հիմնախնդիրները լուծելու, խորհելու, հարցեր առաջադրելու [7]:

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր սովորող կարող է ունենալ իր նվաճումների գրանցամատյանը, ինքնագնահատման ռուբրիկը, որտեղ ինքը կգնահատի իր գիտելիքները, հմտությունները և հնարավորություն կունենա համեմատել այն ուսուցչի գնահատականի հետ: Ինքնագնահատումը թույլ կտա սովորողին գնահատել իր սկզբանական արդյունքները ձեռք բերած նոր արդյունքների հետ [10]:

Ուսումնասիրելով այս ամենը՝ հասկանալի է դառնում. որ դյուրին չէ կազմակերպել տարբերակված ուսուցում, թեկուզ հենց այն առումով, որ նման դասերի պլանավորումը աշխատատար է և պահանջում է քրտնաջան աշխատանք, երկար ժամանակ:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,
2.խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների

3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ուսուցչից պահանջվում է նաև սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծում, որը ենթադրում է՝

- -հաղորդակցություն, ժողովրդավարական, հարգալից ոճ
- -բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը
- -աջակցող, խրախուսող, բարյացակամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով
- -գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու դրդապատճառների ապահովում

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն պահում ուսումնական գործընթացում: Մանուկ Մկրտչյանի «Ուսուցման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը» մենագրության մեջ ձևակերպում են ուսուցման կանխադրույթները. Առաջին՝ յուրաքանչյուր առողջ երեխա ի վիճակի է յուրացնել ցանկացած ուսումնական նյութ: Երկրորդ՝ երեխաները միմյանցից տարբերվում են ոչ թե այս կամ այն նյութը յուրացնելու իրենց հնարավորություններով, այլ այդ նյութը յուրացնելու իրենց անհատական ձևով և միջոցներով: Երրորդ՝ աշակերտի հետաքրքրությունը ուսումնասիրվող նյութի նկատմամբ որոշվում է ոչ թե այդ նյութի բովանդակությամբ, այլ այդ նյութի յուրացման գործընթացում աշակերտի գործողությունների հաջորդականությամբ [4, էջ 47]:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Տարբերակված ուսուցման փորձնական հետազոտությունն իրականացվել է ուսումնական քարտերի օգտագործմամբ :

Հետազոտական աշխատանք իրականացրել եմ Ջագիկավանի միջնակարգ դպրոցի տարրական դասարանում՝ ֆրանսերեն առարկայից: Դասարանը բաղկացած 12 աշակերտներից: Նախնական հայտորոշման արդյունքում նպատակահարմար է գտնվել դասավանդած դասարանում, որտեղ կատարում եմ այս հետազոտական աշխատանքը, ստեղծել երեք խումբ չորսական աշակերտներով, հետևյալ ուսումնառության մակարդակներով.

1-ին խումբ — հմտությունների և գիտելիքների լավ մակարդակով, որոնք կարող են ինքնուրույն գտնել առաջադրանքների լուծումները,

2-րդ խումբ — հմտությունների և գիտելիքների միջին մակարդակով, որոնք կարող են ուսուցչի խորհուրդներով գտնել առաջադրանքների լուծումները,

3-րդ խումբ — հմտությունների և գիտելիքների ցածր մակարդակով, որոնք դժվարանում են գտնել լուծումները, կարիք ունեն լրացուցիչ բացատրությունների և օգնության:

Յուրաքանչյուր խմբում աշակերտների քանակը կարող է փոփոխվել տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների պատճառով: Ամեն խմբի համար կազմվում է այնպիսի առաջադրանքներ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին ցուցաբերել իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Ըստ բարդության աստիճանի իրականացրել եմ առաջադրանքների տարբերակում: Ամենապարզ առաջադրանքը տրվել է երրորդ խմբին՝ դիտել, ուսումնասիրել քարտերում զետեղված նկարները և կռահել ուսուցանվող տառը ըստ այդ պատկերների, գրի առնել տետրերում, փորձել վերհիշել նույն տառով այլ բառեր և վերհիշել տվյալ տառի վերաբերյալ անցած երգը և փորձել խմբով երգել : Երկրորդ խմբի սովորողներին հանձնարարվել է գրել քարտերում զետեղված պատկերների անունները, դասագրքի նյութից դուրս բերել այդ բառերով կազմված բառակապակցություններ և կարդալ, թարգմանել դասից այդ բառակապակցություններով նախադասությունները: Իսկ առաջին խմբի սովորողներն հանձնարարվել է գրել պատկերների անունները, դուրս բերել բառակապակցություններ, ապա այդ բառակապակցությունները օգտագործել նախադասությունների մեջ, կատարել գործնական աշխատանք՝ գծապատկերով ցույց տալ դասի գլխավոր, բանալի բառերը ընդգծելով նոր երկտառերը (Տես հավելված 2):

Կատարելով անդրադարձ սովորողների ցուցաբերած արդյունքերին՝ կարողացել եմ առանձնացնել գիտելիքի յուրացման երեք մակարդակ՝

ա) Բարձր մակարդակ - լիարժեք յուրացրել է նյութը, կիրառում է անծանոթ իրավիճակներում, կիրառում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

բ) Միջին մակարդակ - յուրացրել է նյութը, կիրառում է ծանոթ իրավիճակներում, անում է եզրակացություններ:

գ) Նվազագույն մակարդակ- հասկացալ է նյութը, մտապահում է, վերարտադրում է:

Այնուհետև ապահովվել է հետադարձ կապ. Ուսումնական նյութը լիարժեք յուրացրած սովորողներին տրվել է հնարավորություն գիտելիքների խորացման ու ընդլայման համար: Ուսումնական նյութի լիարժեք յուրացման հարցում դժվարությունների հանդիպած սովորողների համար մշակվել է համապատասխան առաջադրանքներ: Երրորդ խմբի սովորողներին օգնելու հարցում շատ արդյունավետ է օգնական աշակերտների դերը, ովքեր նշանակվում էին առաջին կամ երկրորդ խմբերից: Տարբերակված ուսուցում իրականցնելիս դժվար է ակնկալել լիարժեք արդյունք, եթե տարբերակումը իրականացնում ենք միայն դպրոցում: Հնարավոր լավագույն արդյունքը ստանալու համար անհրաժեշտ է տարբերակել նաև տնային աշխատանքը, ինչը սովորողների ուսումնական գործունեությունն է, որը նրանք պիտի կատարեն ինքնուրույն:Քանի որ տնային աշխատանքը, ինքնակրթության մի ձև է, ուստի պիտի լինի սովորողի համար մատչելի, համապատասխանի նրա գիտելիքներին ու կարողություններին:Տարբերակված ուսուցումը կիրառելիս՝ սովորողներին հանձարարվել է տարբերակված տնային աշխատանքեր՝ համապատասխան նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկություններին: Ցածր պատրաստվածություն ունեցողներին տրվել են այնպիսի առաջադրանքներ, որոնք ավելի պարզ են, պարունակում են ավելի քիչ տեղեկություններ, ավելի շատ նկարներ ու ցուցադրումներ: Միջին կարողություններ ունեցող սովորողներին՝ իրենց կարողություններին համապատասխան, իսկ բարձր կարողություններ ունեցող սովորողների առաջադրանքները ավելի բարդ էին, համընդգրկուն, մեծ ծավալով:

Առաջադրանքներ կազմելիս պարտադիր կիրառվել են տարբեր դիտակտիկ նյութեր, սահիկաշար, պաստառներ, տառադարան, ձայնագրություններ և ունկնդրումներ, ինչպես նաև կիառվել է Quizizz առցանց գործիք:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողներին տրվեց երկու հայտորոշիչ թեստ, որոնց արդյունքներն ամփոփվեցին ըստ առաջադրանքների կատարման 50% և ավելի կատարված լինելու:

Ըստ հետազոտության արդյունքների հայտորոշիչ 1- ին թեստի առաջադրանքների 50% և ավելի հաղթահարել է 6 աշակերտ կամ սովորողների 50%-ը:

Հայտորոշիչ 2-րդ թեստի արդյունքները՝ 50% և ավելի հաղթահարել է 10 աշակերտ կամ սովորողների 83,3%-ը (Տես հավելված 1):

Հայտորոշիչ թեստ 1 և հայտորոշիչ թեստ 2
արդյունքների վերլուծություն



50%

Սովորողներին տրվեցին նաև Ելքի քարտեր, որոնց արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ աշակերտները հավանում են տարբերակված ուսուցման կիրառումը դասապրոցեսին (Տես հավելված 3):



Այսպիսով եկանք այն եզրահանգման,որ ֆրանսերենի ուսուցանման ընթացքում տարբերակված ուսուցում իրականացնելիս՝

- բարձրացել է հետաքրքրությունը առարկայի նկատմամբ,
- ակտիվացել է աշակերտների իմացականությունը,
- զարգացել է վստահությունը սեփական ուժերի նկատմամբ,
- բարձրացել է կոլեկտիվ աշխատելու մշակույթը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

- տարբերակված ուսուցումը գործնականում շատ աշխատատար, բավականին դժվար կիրառվող ուսուցման ձև է, որը պահանջում է մանկավարժական հմտություններ, փորձ, պատրաստվածություն, համբերություն, ցանկություն և ժամանակ, սակայն արդյունավետ է, նպաստում է սովորողների շահադրդման և առաջադիմության բարձրացմանը,
- ուսուցիչը հանդես է գալիս ոչ թե իբրև տեղեկատվության աղբյուր, այլ մենթոր, վերլուծող, որն անընդհատ ինքնահարցադրումներ է անում, թե ինչպես ավելի արդյունավետ դասավանդի, ինչպես մոտիվացնի աշակերտներին և դարձնի ուսուցումը հաճելի զբաղմունք, կարողանում է ռացիոնալ կառավարել դասապրոցեսի ժամանակը, ստեղծում ֆիզիկական և հոգեբանական բարենպաստ պայմաններ և խթանող ուսուցման միջավայր յուրաքանչյուր սովորողի համար, դասավանդման մեթոդաբանության մեջ որդեգրում դասավանդման և ուսումնառության այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք համապատասխանում են նրանց պահանջմունքներին ու կարիքներին,
- աշակերտները հետաքրքրություն են ցուցաբերում առարկայի նկատմամբ և գիտակցում են, թե «ինչու են սովորում» և «ինչպես պետք է սովորեն», ներգրավված են ուսումնական գործընթացին և չեն ձանձրանում, վստահություն ունեն սեփական ուժերի նկատմամբ, ցուցաբերում են ինքնուրույնություն՝ իրենց հետաքրքրություններին և հնարավորություններին համարժեք աշխատանքներ իրականացնելիս և զգում են հաջողության բերկրանքը:

Տարբերակված ուսուցումը արդյունավետ է իրականացնել հատկապես Օտար լեզվի դասավանդման պրոցեսին, քանի որ աշակերտները մյուս ուսումնասիրվող առարկաները սովորում են իրենց մայրենի լեզվով և ինքնարտահայտվելը, որևէ նյութ վերլուծելը ավելի հեշտ է տրվում մայրենի լեզվով, իսկ օտար լեզվով առավել բարդ է քանի որ կան լեզուների համարժեքության խնդիրներ, և անհատական մոտեցումը յուրաքանչյուր աշակերտին ավելի է կարևորվում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ.,; Ավագյան Մ.: Թերզյան Գ.:Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ: Երևան, 2014, 84 էջ:
2. Լիզ Բիլզ և Վալ Բրուկս: Տարբերակման կիրառումն ուսումնառության խթանման համար: < < Preparing to Teach in Secondary Schools A STUDENT TEACHER'S CUIDE TO PROFESSIONNAL ISSUES IN SECONDARY EDUCATION>>
3. Խաչատրյան Ս.: Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
4. Մկրտչյան Մ. Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը: Երևան, հեղինակային հրատարակչություն, 2011, 140 էջ:
5. 101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար : Բուդապեշտ, 2006, 63 էջ:
6. Մանկավարժական միտք 117, Զանգակ, 2013: 6. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա.: Մանկավարժություն , Մանկավարժ 2005:
7. http://194school.org/2021/11/educational-cards/?fbclid=IwAR205tpI1CLcBPtmLGXQ5m7NI4r5BO2ODtSw8Mgun9bqkpA1uxVHhzWpY9Y
8. https://www.youtube.com/watch?v=bclAqLVkCjA
9. https://www.youtube.com/watch?v=c-eaHL7-TIE
10. https://forum.armedu.
11. https://chalikyansusanna.home.blog/2020/01/21/%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A1%D5%AC%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80/
12. https://biblioclub.ru/index.php?page=book_red&id=446135

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայտորոշիչ թեստ

1. Նշվածներց որն է **K k** տառով բառերի շարքը:

1.

2.

2. <u>Որ բառի մեջ է կիրառվում **ou** երկտառը:</u>

Ա. une p….pée
Բ. une p….re
Գ. un ….to

3. <u>Նշվածներից որն է **une souris** բառի հայերեն տարբերակը:</u>

Ա. Տիկնիկ

Բ. Մուկ

Գ. Գայլ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

1. <u>Ուսումնական քարտ երրորդ խմբի համար:</u>

2.

1. Դիտել, ուսումնասիրել քարտերում զետեղված նկարները և կռահել ուսուցանվող տառը ըստ այդ պատկերների:

2. Գրի առնել գտած տառը տետրերում:

3. Վերհիշել տվյալ տառի վերաբերյալ անցած երգը և փորձել խմբով երգել:

2. <u>Ուսումնական քարտ երկրորդ խմբի համար:</u>

1. Գտնել քարտերում զետեղված պատկերների անունները:

2. Գրի առնել բառերը տետրերում , դասագրքի նյութից դուրս բերել այդ բառերով կազմված բառակապակցություններ:

3. Կարդալ և թարգմանել դասից այդ բառակապակցություններով նախադասությունները:

3.Ուսումնական քարտ առաջին խմբի համար:

1.Գտնել քարտերում զետեղված պատկերների անունները

2. Դուրս բերել այդ բառերով կազմված բառակապակցությունները, ապա այդ բառակապակցությունները օգտագործել նախադասությունների մեջ:

3. Կատարել գործնական աշխատանք՝ գծապատկերով ցույց տալ դասի գլխավոր, բանալի բառերը ընդգծելով նոր երկտառերը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԵԼՔԻ ՔԱՐՏ

1. Հետաքրքիր էր արդյոք տարբերակված առաջադրանքներով աշխատել:

Ա. այո բ. Ոչ

2. Կցանկանայիք նորից նման խմբային աշխատանքներ կատարել:

Ա. այո բ. Ոչ

3. Ինչ առաջարկներ կամ դիտարկումներ ունեք տարբերակված ուսուցմամբ դասերի վերաբերյալ:

_____

_____